Զ. Տ. ՊԱՊՅԱՆ

ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ ՄԱՍՍԱՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԶԵՎԵՐԻ ՄԱՍԻՆ

Մարքսիզմ-լենինիզմի հիմնադիրները ընդգծել են մարդու ստեղծագործական դերը տեխնիկական պրոգրեսում։ Ինչպես հայտնի է, տեխնիկան առանց մարդկանց քարացած է, նա զարդանում և գործողության մեջ է դրվում մարդկանց օգնությամբ։ «Բնությունը,— գրում էր Մարքսը,— չի կառուցում մեքենաներ, շոգեքարշեր, երկաթուղիներ, էլեկտրական հեռագրեր... և այլն։ Այդ բոլորը մարդկային գործունեության արդյունք է...»[1]։ Բացառիկ մեծ է ժողովրդական մասսաների անմիջական աշխատանքային գործունեության դերը առաջավոր տեխնիկայի ստեղծման, մեքենաների, հաստոցների, սարքավորումների ռացիոնալ օգտագործման ուղղությամբ։

Վ. Ի. Լենինը իր ժամանակին ասել է բանվոր դասակարգի և գյուղացիության անսպառ ու հարուստ տաղանդների մասին, կանխատեսել դրանց ծաղկումը նոր հասարակության կառուցման ընթացքում։ Նա ընդգծել է, որ սոցիալիզմի կառուցումը անիմաստ է առանց ժողովրդական լայն մասսաների ակտիվ մասնակցության։ Լենինը բարձր է գնահատել աշխատավոր մասսաների ստեղծագործական հանճարը. «տասնյակ միլիոնավոր ստեղծագործողների խելքը»[2] գնահատում է ավելին, «քան ամենամեծ ու հանճարեղ նախատեսումը»[3]։ Լենինը ջերմորեն էր ողջունում ռացիոնալիզատորներին և գյուտարարներին։

Ժամանակակից պայմաններում, կոմունիստական կուսակցությունը աշխատավորների արտադրողական ստեղծագործական նախաձեռնության զարգացումը համարում է որպես սովետական առաջավոր մարդկանց հոգատարության բարձր դրսևորում սոցիալիստական հայրենիքի ծաղկման նկատմամբ, որպես ժողովրդի բարեկեցության բարձրացման համար պայքարի ձևերից մեկը, կոմունիստական գիտակցության աճի ցուցանիշ։ Այժմ արմատավորվել է նոր, մարդկության պատմության մեջ դեռևս անհայտ հարաբերություններ բանվորական մասսաների և արտադրության միջոցների միջև, որի օգնությամբ ստեղծվում են նյութական արժեքներ։ Այդ հարաբերությունները անհարիր են կապիտալիզմի պայմաններին։ Կապիտալիստական ձեռնարկություններում տեխնիկան հակադրվում է բանվորին, որպես նրան խորթ ուժի, այն իր հետ բերում է շատ չարիքներ աշխատավոր ժողովրդին, ծառայում է շահագործման միջոց, գործազրկության, աշխատավոր մասսաների աղքատության աճի աղբյուր։ Դրանում է դրսևորվում աշխատավոր մասսաների ստեղծագործական

---

[1] Из неопубликованных рукописей К. Маркса, «Большевик», № 11—12, 1939 г., стр. 63.

[2] Վ. Ի. Լենին, հ. 26, էջ 581։

[3] Նույն տեղում։

պոտենցիալ հնարավորությունները արգելակող բուրժուական արտադրության դասակարգային բնույթը։ Սոցիալիզմի ժամանակ տեխնիկան ստացավ իր բուն նշանակությունը՝ հեշտացնել աշխատանքը և այն դարձնել ավելի արտադրողական, լրիվ օգտագործել բնության ուժերը աշխատանքի էֆեկտիվության բարձրացման, նյութական և հոգևոր հարստությունների ստեղծման համար։ Ահա թե ինչու սոցիալիստական հասարակության պայմաններում բանվորական ուժի և արտադրության միջոցների համակցումը ծնում է մասսաների ստեղծագործության և ինքնագործունեության անսահմանելի թափ։

Կոմունիստական շինարարության վիթխարի հեռանկարները և հոյակապ խնդիրները հանդիսացան մասսաների աշխատանքային հերոսության և ստեղծագործական նախաձեռնության ազդակներ, որոնք մեծ ավանդ մուծեցին 1959—1967 թթ. ժողովրդա-տնտեսական պլանի ժամանակից շուտ կատարման գործում։ Սովետական ժողովրդի այդ պատմական պայքարը ուղեկցվեց համաժողովրդական այն մեծ շարժումներին, որոնք ուղղված էին նոր տեխնիկայի և առաջավոր տեխնոլոգիայի՝ արտադրության մեջ արմատավորման միջոցով աշխատանքի արտադրողականության բարձրացմանը։ Մեծ է կուսակցական կազմակերպությունների դերը արտադրական գործունեության բոլոր ոլորտներում մասսաների աշխատանքային ակտիվությունը բարձրացնելու գործում։ Կուսակցական կոմիտեների ղեկավարությամբ աշխատավորների ստեղծագործական արտադրական նախաձեռնության զարգացման գործում, ուսումնասիրվող ժամանակաշրջանում, իրենց արժանի ավանդը մուծեցին արհմիութենական, կոմերիտական կազմակերպությունները, ժողովրդական վերահսկողության օրգանները և աշխատավորական մյուս մասսայական կազմակերպությունները։

Այժմ անդրադառնանք տեխնիկական առաջադիմության պայքարի համար աշխատավորության մասնակցության այնպիսի ձևերի հիմնական կողմերին և առանձնահատկություններին, ինչպես բանվորական մասսաների տեխնիկական ստեղծագործությունը ձեռնարկություններում։

Տեխնիկական առաջադիմության, տեխնիկայի անընդհատ կատարելագործման, արտադրության կազմակերպման նոր մեթոդների մասին կուսակցության կոչերը, կոմունիզմի աստիճանաբար կառուցման տարիներին, առաջ բերեցին լայն ժողովրդական շարժումներ։

Արտադրությունում, գիտահետազոտական և նախագծային ինստիտուտներում, ինչպես նաև կոնստրուկտորական բյուրոներում, կուսակցական, կոմերիտական և արհմիութենական կազմակերպությունների անմիջական ղեկավարությամբ, առաջացան մասսայական տեխնիկական ստեղծագործության դրսևորման շատ նոր ձևեր։ Գիտատեխնիկական խորհուրդների, հասարակական ստուգատեսների, ռեյդերի, տեխնիկա-էկոնոմիկական խորհուրդների, տնտեսական վերլուծության հասարակական բյուրոների և մյուսների հետ միասին յութնամյակում տեխնիկայի և տեխնոլոգիայի կատարելագործմանը մեծ օգնություն են ցույց տվել հասարակական այնպիսի կազմակերպություններ, ինչպես գիտա-տեխնիկական ընկերությունը (ԳՏԸ), գյուտարարների և ռացիոնալիզատորների համամիութենական ընկերությունը (ԳՌՀԷ), կոնստրուկտորական հասարակական բյուրոն (ԿՀԲ), հասարակական տեխնոլոգիական բյուրոն (ՀՏԲ), գյուտարարության և ռացիոնալիզատորության ներդրման հասարակական արտադրամասերը և այլն։ Դրանք վկայություն են այն բանի, թե սովե-

տական ժողովրդի կողմից ինչպիսի չափ պաշտպանություն են գտնում տեխնիկական առաջադիմության արագացման մասին կուսակցության միջոցառումները։

Տեխնիկական առաջադիմությանը, արտադրության կատարելագործմանը աշխատավորական լայն մասսաների մասնակցության նոր ձևերը բնորոշ են սոցիալիստական սիստեմի զարգացման ներկա աստիճանին։

Վ. Ի. Լենինը խորապես համոզված էր այն բանում, որ ժողովրդի մեջ կա տաղանդների անսպառ աղբյուր, «որոնց կապիտալիզմը ճմլել, ճնշել, խեղդել է հազարներով ու միլիոններով»[4]։ Սովետական իշխանությունը հոգատարությամբ է շրջապատել աշխատավորների ստեղծագործական նախաձեռնությունը։

Սովետական իշխանության գոյության առաջին օրերից (1918 թ. հունվար) կազմակերպվեց գյուտարարության և կատարելագործման գործերի կոմիտեն։ 1932 թ. հունվարին տեղի ունեցավ գյուտարարների համամիութենական 1-ին համագումարը «բանվորական մասսայական գյուտարարության համար» նշանարանով։ Մասսաների ստեղծագործությունը նոր թափ ստացավ կոմունիզմի ծավալուն կառուցման պայմաններում։ 1958 թ. հունվարին կազմակերպվեց գյուտարարների և ռացիոնալիզատորների համամիութենական ընկերությունը։ Սովետական արդյունաբերությունում հայրենական տեխնիկայի զարգացմանը իրենց ստեղծագործական ակտիվ մասնակցության համար փառաբանվեցին հարյուր հազարավոր բանվորներ։ Այսպիսին է բանվորության և գյուղացիության միջից գյուտարարների[5] սիստեմատիկ առաջ քաշման մասին Վ. Ի. Լենինի ցուցումների գործնական կատարումը։

Կյանքում իրագործելով ՍՄԿԿ Կենտկոմի հունիսյան (1959 թ.) պլենումի որոշումները, մասնավորապես այն դրույթը, որ աշխատավոր մասսաների ստեղծագործական նախաձեռնությունը և ակտիվությունը հանդիսանում են ժողովրդական տնտեսության բոլոր բնագավառների զարգացման և կատարելագործման երաշխիք[6], Հայաստանի կոմունիստական կուսակցությունը տեխնիկական ստեղծագործության մեջ աշխատավոր մասսաների ընդգրկման գործում հասարակական կազմակերպությունների գործունեության հետագա բարձրացման համար իրականացրել է մի շարք միջոցառումներ։ 1959 թ. ՀԿԿ Կենտկոմի բյուրոն ռացիոնալիզատորների և գյուտարարների շարժման ծավալման նպատակով որոշում ընդունեց՝ 1959 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին տեխնիկական առաջադիմության միամսյակ անցկացնելու մասին։ Այդ կարճ ժամանակում տրվեց ավելի քան 3 հազար ռացիոնալիզատորական առաջարկություն, որից 710ը՝ հանրապետության ժողտնտեսության ձեռնարկություններում արտադրական պրոցեսների ավտոմատացման և մեքենայացման[7], իսկ 200-ից ավելին՝ տեխնոլոգիական պրոցեսների կատարելագործման գծով։ Մեկ ամսվա ընթացքում ներդրվեցին 537 առաջարկություններ, որոնցից առաջացած տարեկան պայմանական օգուտը կազմեց 8 միլիոն ռուբլի[8]։

---

4 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 25, էջ 496։

5 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 42, էջ 14։

6 КПСС в резолюциях,... 1960, ч. 4, стр. 542.

7 ՀԿԿ Կենտկոմի հաշվետու զեկուցումը Հայաստանի կոմունիստական պարտիայի XXI համագումարում, 1960, էջ 18—19։

8 Նույն տեղում։

Որոշ ժամանակ անց, Հայաստանի ԿԿ XXI համագումարում հատուկ ընդգծվեց գիտահետազոտական ինստիտուտների, նախագծային և կոնստրուկտորական բյուրոների տեխնիկական մտավորականության ակտիվ մասնակցությունը ոչ միայն նոր տեխնոլոգիայի, մեքենաների, հաստոցների, ապարատների, սարքերի նոր կոնստրուկցիաների մշակման ու ներդրման, այլ նաև գյուտարարներին օգնություն ցույց տալու գործում։ 1958—1960 թթ. Հայաստանի ռացիոնալիզատորների և գյուտարարների առաջարկությունների ներդրումից պետությունը ստացավ 148,8 միլիոն ռուբլու տարեկան պայմանական օգուտ[9], իսկ 1966 թ. 9 ամսվա ընթացքում 21 հազար ռացիոնալիզատորական առաջարկությունների ներդրումից՝ 24 միլիոն 579 հազար ռուբլու օգուտ[10]։

Գյուտարարական միամսյակը, անշուշտ, չէր կարող լուծել բոլոր անհրաժեշտ հարցերը և չէր կարող դառնալ այդ շարժման ղեկավարման հիմնական ձևը։ Սակայն այն խաղաց կազմակերպող և մոբիլիզացնող ակնհայտ դեր։ Հետագա ժամանակաշրջանում ռացիոնալիզատորության և գյուտարարության շարժման ղեկավարությունը իրականացվեց այդ շարժման գլխավոր հարցի՝ ներդրման պրոբլեմի լուծման պայմանների աստիճանաբար ստեղծման ուղիով։

ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների սովետի 1960 թ. մայիսի 20-ի «Գյուտարարական և ռացիոնալիզատորական առաջարկությունների ժողովրդական տնտեսության մեջ ներդրումը բարելավելու միջոցառումների մասին»[11] որոշումը լուծեց մի շարք կազմակերպական ցավոտ հարցեր, որը նպաստեց ռացիոնալիզատորական առաջարկությունների ներդրման արագացմանը։ Մասնավորապես, կազմակերպվեցին փորձնական բազաներ և արտադրամասեր, որտեղ գյուտարարները և ռացիոնալիզատորները կարող էին հատուկ սարքավորումների վրա փորձել իրենց առաջարկությունները, պատրաստել փորձնական նմուշներ և այլն, չխանգարելով պլանների կատարմանը։ Մասսաների ստեղծագործական ակտիվության բարձրացման համար մեծ նշանակություն ունեցավ նաև ՍՍՀՄ Մինիստրների սովետի 1962 թ. հոկտեմբերի 17-ի «Գիտա-տեխնիկական ընկերությունների հանձնարարականների և առաջարկությունների ժողովրդական տնտեսության մեջ օգտագործումը բարելավելու մասին» որոշումը[12]։ Հայաստանի կուսակցական, արհմիութենական, կոմերիտական կազմակերպությունները ղեկավարվելով այդ որոշումով, աշխատավոր մասսաներին մոբիլիզացրեցին ռացիոնալիզատորության և նորարարության մասսայական հասարակական ձևերի զարգացման համար։ 1965 թ. Հայաստանի ԳՏԸ կազմակերպությունները իրենց շարքերում արդեն համախմբում էին 32 հազար գիտական, ինժեներա-տեխնիկական աշխատողներ, արտադրության առաջավորներ և նորարարներ[13]։ Իսկ 1967 թ. տվյալներով նրանց թիվը աճեց մինչև 41 հազարի[14]։ 1963—1965 թթ. ներդրվել են 24 հազար ռացիոնալիզատորական առաջարկություններ՝ 24 միլիոն ընդհանուր տարեկան

9 Նույն տեղում։
10 Նույն տեղում։
11 «Справочник партийного работника», вып. 3, 1961, стр. 296.
12 Նույն տեղում։
13 «Промышленность Армении», № 5, 1965, стр. 63.
14 «Коммунист», 20 октября, 1967 г.

պայմանական օգուտով[15]։ Այդ բնագավառում լավ արդյունքների հասան ժողտնտխորհի քիմիական, գունավոր մետալուրգիայի և լեռնահանքային արդյունաբերության վարչությունների, Հանրապետության Մինիստրների սովետին կից էներգետիկայի գլխավոր վարչության ձեռնարկությունները։

Ռացիոնալիզատորական շարժման զարգացմանը ոչ միշտ անհրաժեշտ օգնություն են ցույց տվել առանձին ձեռնարկությունների տնտեսական ղեկավարները։ Դրությունը որոշ չափով բարելավվեց, երբ ժողտնտխորհը և արհմիությունների խորհուրդը հայտարարեցին «Հայկական ՍՍՀ-ի ժողտնտխորհի գյուտարարության և ռացիոնալիզատորության գծով լավագույն ձեռնարկությունների» անվան համար սոցիալիստական մրցություն։ Այդ մրցության մեջ հաղթող դուրս եկան «պոլիվինիլացետատ», Լենինականի դարբնոցա-մամլակային սարքավորումների գործարանների, Երևանի Վ. Ի. Լենինի անվան մետաքսի, Լենինականի տեքստիլ, Քաջաբանի պղնձամոլիբդենի կոմբինատների կոլեկտիվները։ Վեց տարվա ընթացքում (1959—1964 թթ.) Հանրապետության գունավոր մետալուրգիական և լեռնահանքային արդյունաբերությունը (այդ բնագավառները մյուսներից լավ մասնակցեցին տվյալ մրցությանը) 2,4 անգամ ավելացրին համախառն արտադրանքի թողարկումը, 2,9 անգամ՝ մոլիբդենի կոնցենտրատի արտադրությունը, 2,6 անգամ պղնձինը, 3,5 անգամ ռաֆինացված պղնձինը։ Այդ գործում որոշակի ավանդ դրեցին արտադրության ռացիոնալիզատորները, գյուտարարները և նորարարները։ Ռացիոնալիզատորական առաջարկությունների և գյուտարարության ներդրումից յոթնամյակի ֆոնդին հինգ միլիոն ռուբլի տալու մասին պարտավորությունը գերակատարվեց։ Ժողովրդական տնտեսությունը տվյալ բնագավառներից ստացավ 6 միլիոն 372 հազար ռուբլու խնայողություն[16]։ Յոթնամյակի տարիներին քիմիական արդյունաբերության ձեռնարկություններում ներդրվեցին 12 հազար ռացիոնալիզատորական առաջարկություններ՝ ավելի քան 16 միլիոն ռուբլու ընդհանուր տնտեսական օգուտով[17]։

Տեխնիկական առաջադիմության գործում մեծ ավանդ մուծեցին գիտա-տեխնիկական ընկերությունները։ ՍՍՀ Միության մասշտաբով գիտա-տեխնիկական ընկերությունները համախմբել էին ավելի քան 2 միլիոն ինժեներներ, տեխնիկներ, արտադրության նորարարներ[18], իսկ 1965 թ.՝ մոտ 2,5 միլիոն մարդ[19]։ 1923 թ. ժողովրդական տնտեսության բարձրագույն խորհրդի գիտա-տեխնիկական վարչության տվյալներով, մեր երկրում կար 13 գիտա-տեխնիկական ընկերություն[20]։ Այդ տարիներին տեխնիկական պրոպագանդայի հարցերը կենտրոնացված էին ինժեներների ասոցիացիայում և նրա ինժեներա-տեխնիկական սեկցիայում։ 1923 թ. ստեղծվեցին գիտական ընկերություններ

---

15 «Промышленность Армении», № 5, 1965, стр. 63.

16 ՀՍՍՀ ժողտնտխորհի գունավոր մետալուրգիայի և լեռնահանքային արդյունաբերության վարչության ընթացիկ արխիվ, 1965 թ. հունիս։

17 «Коммунист», 5 августа, 1965 г.

18 В. В. Гришин, Отчет о работе ВЦСПС в период развернутого строительства коммунистического общества, 1963, стр. 24.

19 М. З. Бор и В. Г. Лебедев, Централизм и демократия в управлении промышленностью, «Мысль», 1966, стр. 58.

20 «Коммунист», 13 ноября, 1966 г.

որոնց մեջ ընդգրկվեցին առաջավոր բանվորներ[21]։ Գիտա-տեխնիկական ընկերության ներկայիս կառուցվածքը հիմնվում է ՍՄԿԿ Կենտկոմի 1954 թ. դեկտեմբերի 24-ի «Ինժեներա-տեխնիկական գիտական ընկերությունների մասին» որոշման վրա։ Այդ որոշումով ինժեներա-արհեստակցականի փոխարեն ստեղծվեցին մասսայական գիտա-տեխնիկական ընկերություններ՝ արդյունաբերության տարբեր բնագավառների գծով[22]։ Ընկերություններում պետք է համաձուլվեին գիտական աշխատողների, ինժեներների, տեխնիկների և առաջավոր բանվորների ստեղծագործական ուժերը։ ԳՏԸ գործունեության ղեկավարությունը դրված էր ՀԱՄԿԽ-ի վրա։ Ձեռնարկությունների ԳՏԸ դերը էլ ավելի բարձրացավ, երբ տեխնիկական խորհրդի ֆունկցիաները տրվեցին ԳՏԸ սկզբնական կազմակերպություններին։ Այդ ժամանակից ի վեր նրանք սկսեցին քննարկել նոր տեխնիկայի ներդրման, նոր մեքենաների արտադրության յուրացման մասին հարցերը։

Կուսակցության այդ բոլոր միջոցառումները հանգեցրին նրան, որ յոթնամյակի վերջում տնտեսության խոշոր բնագավառների գծով հաշվում էին 21 գիտա-տեխնիկական ընկերություններ, որոնք համախմբում էին մոտ 3 միլիոն մարդ[23]։ Յոթնամյակի 4 տարում նրանց միջոցով մշակվել է 450 հազար հանձնարարագրեր և առաջարկություններ։ ԳՏԸ 15 հազար սկզբնական կազմակերպություններ իրենց վրա էին վերցրել և հաջողությամբ իրականացնում էին ձեռնարկությունների արտադրական-տեխնիկական խորհուրդների ֆունկցիաները։ Դրա շնորհիվ ԳՏԸ խորհուրդները սկսեցին անմիջական ազդեցություն գործել ձեռնարկությունների տեխնիկական առաջադիմության վրա։

Յոթնամյակի տարիներին երկակի խնդիրներ էին լուծում նորաստեղծ գիտա-տեխնիկական ընկերությունները։ Նրանք օգնում էին նորագույն գիտա-տեխնիկական նվաճումների և արտադրական առաջավոր փորձի ուսումնասիրմանը և պրոպագանդմանը, միաժամանակ ամրապնդում և խորացնում ինժեներա-տեխնիկական և գիտական աշխատողների համագործակցությունը բանվորական մասսաների՝ արտադրության նորարարների հետ։

1958 թ. ՀԿԿ Կենտկոմը հանրապետության արհմիութենական խորհրդին հանձնարարեց ստեղծել գիտա-տեխնիկական ընկերությունների Հայաստանի հանրապետական խորհուրդ։ Այդ միջոցառումը համընկավ ընկերության անդամների թվի զգալի ավելացմանը։ Այն ավելացավ գրեթե հինգ անգամ, իսկ ԳՏԸ սկզբնական կազմակերպությունների քանակը հասավ 853-ի։ 1966 թ. Հայաստանում գործում էին ճյուղային 17 գիտա-տեխնիկական ընկերություններ, որոնք միավորում էին մոտ 37 հազար բանվոր-նորարարների, ինժեներա-տեխնիկական և գիտական աշխատողների։

ԳՏԸ հանրապետության խորհուրդը մեծ աշխատանք ծավալեց սկզբնական կազմակերպությունների նկատմամբ ճյուղային ընկերությունների հրահանգչական և մեթոդական ղեկավարությունը ապահովելու համար։ ԳՏԸ սիստեմի մեջ մտան նաև տեխնիկայի հանրապետական տունը՝ Երևանում, նրա

---

21 М. Некрасова. Работа профсоюзов по внедрению достижений науки в производство. Профиздат, 1965, стр. 81.

22 Օրինակ, գոյություն ունեցող «ձուլողների ինժեներա-տեխնիկական ընկերությունը» համախմբում էր արդյունաբերության տարբեր բնագավառների ձուլող ինժեներներին։

23 «Коммунист», 13 декабря, 1966 г.

Կիրովականի ֆիլիալը։ Տեխնիկայի տանը կից ստեղծվեց թողարկվող արտադրանքի որակի, հուսալիության և երկարակեցության պրոբլեմների գծով ԳՏԸ հասարակական համալսարան, որում 1965 թ. սովորում էին ավելի քան 200 մարդ։ 1964 թ. ԳՏԸ կազմակերպեց առաջավոր փորձի 850 դպրոցներ, կուրսեր և սեմինարներ՝ նոր տեխնիկայի ուսումնասիրման գծով, որում ընդգրկված էին 15038 մարդ[24]։ 1965 թվականի ընթացքում ԳՏԸ կողմից անց են կացվել 1076 բազմապիսի միջոցառումներ, սեմինարներ և այլն՝ ընկերության անդամների գիտա-տեխնիկական մակարդակի, բանվորների արտադրական որակավորման բարձրացման նպատակով[25]։

ԳՏԸ սկզբնական կազմակերպությունների անդամները ակտիվ մասնակցություն են ցույց տվել համամիութենական հասարակական ստուգատեսներին։ Նրանք կատարում էին գիտա-հետազոտական աշխատանքներ, օգնում էին գիտության և տեխնիկայի նվաճումները արտադրության մեջ ներդնելուն։

Այսպես, օրինակ, մեծ աշխատանք է կատարվել Հայաստանի ժողտնտխորհի ձեռնարկություններում, մինիստրություններում և գերատեսչություններում էլեկտրաէներգիայի խնայողության ուղղությամբ, որը ավարտվել է ընդհանրացնող կոնֆերանսով։ Այդ կոնֆերանսում ընդունվել են մի շարք հանձնարարականներ, այդ թվում հիդրոկայանների ջրատար խողովակների անընդհատ ջրամղման նոր միջոցը, որը վերացնում է ջրի աննպատակ հոսքը։ Այդ միջոցառման իրականացման պայմաններում հնարավորություն է ստեղծվում տարեկան խնայել մինչև 3,3 միլիոն կիլովատ ժամ էլեկտրաէներգիա[26]։ Երկար ժամանակ Երևանի սարքաշինական գործարանում սարքերի ցուցնակի տպագրությունը կատարվում էր ձեռքով։ Գործարանի ԳՏԸ անդամների նախաձեռնությամբ այդ պրոցեսը մեքենայացվեց, որի շնորհիվ զգալի չափով բարձրացավ աշխատանքի արտադրողականությունը, սարքերի որակը, արտադրության կուլտուրան և ամենագլխավորը՝ ցուցնակի արժեքը իջավ գրեթե 10 անգամ[27]։

Տեխնիկայի զարգացման ժամանակակից էտապը ցույց է տալիս, որ խոշոր ռացիոնալիզատորական առաջարկությունները այժմ մշակվում են ոչ թե առանձին բանվորների և ծառայողների, այլ աշխատողների միացյալ ուժերով։ Այդ բնորոշվում է արտադրության տեխնոլոգիական պրոցեսների բարդությամբ, միմյանց հետ շաղկապված մեքենաների, հաստոցների և սարքավորումների բազմաղանությամբ։ Պատահական չէ, որ յոթնամյակի տարիներին առաջ եկան ռացիոնալիզատորների և գյուտարարների կոմպլեքսային բրիգադներ։ Օրինակ, Ղափանի պղնձահանքային կոմբինատի ռացիոնալիզատորների կոմպլեքսային բրիգադը, որի կազմում էին Ն. Սուրնիկովան, Յ. Թադևոսյանը, Վ. Բարոյանը և Վ. Լունինը, առաջարկել է առանց հորատման հորիզոնի «շտոկվերկայի» մշակման նոր միջոց, որի ներդրումով տարեկան ստացվում է 46160 ռուբլու պայմանական տնտեսում[28]։

---

24 «Промышленность Армении», № 5, 1965, стр. 64.
25 «Коммунист», 15 декабря, 1966 г.
26 «Промышленность Армении», № 4. 1965, стр. 65.
27 Նույն տեղում։
28 Նույն տեղում։

«Պոլիվինիլացետատ» գործարանում Դ. Մելիքյանը, Ա. Գալստյանը, Ս. Իսրաելյանը առաջարկություն մտցրեցին արտադրության թափուկների օգտագործումից ստանալ պիտանի նյութեր, որի շնորհիվ ձեռնարկությունը տարեկան ստացավ 638 հազար ռուբլու խնայողություն։ Հաջողությամբ ծավալվեց ռացիոնալիզատորությունը Ս. Մ. Կիրովի անվան գործարանում։ Գործարանի 740 աշխատողներ հանդիսանում էին ռացիոնալիզատորության և գյուտարարության ընկերության անդամներ, իսկ 130-ը՝ գիտա-տեխնիկական ընկերության անդամ։ Միայն 4 տարում (1960—64 թթ.) գործարանում ներդրվել է 2390 ռացիոնալիզատորական առաջարկություն՝ 3,4 միլիոն ռուբլու տնտեսական խնայողությամբ[29]։ 1963—1964 թթ. ընթացքում Հանրապետությունում արվել է ավելի քան 28 հազար ռացիոնալիզատորական առաջարկություն և գյուտարարություն, որից 24 հազարը ներդրվել է արտադրության մեջ՝ 24,8 միլիոն ռուբլու տնտեսական օգուտով[30]։

Ուսումնասիրված ժամանակաշրջանում Հանրապետությունում լայն տարածում են ստացել գիտնականների, ինժեներների, տեխնիկների, բանվորների կողմից արտադրության կատարելագործմանը մասնակցելու ձևերը։ Օրինակ, հասարակական հիմունքներով գործում էին 105 կոնստրուկտորական և տեխնոլոգիական բյուրոներ, 105 ստեղծագործական բրիգադներ, 15 գիտա-հետազոտական ինստիտուտներ և լաբորատորիաներ, 118 սեկցիաներ և կոմիտեներ[31]։ Հանրապետության ԳՏԸ խորհուրդը և վարչությունը 1965 թ. իրենց շուրջը էին համախմբել 7446 մարդ, 212 ձեռնարկություններում գործում էին արտադրական-տեխնիկական խորհուրդներ, որոնք կատարում էին ԳՏԸ սկզբունական կազմակերպությունների ֆունկցիաները։

Տեխնիկական առաջադիմության մեջ մասսաների հասարակական նախաձեռնությունը դրսևորվում է ԳՏԸ կազմակերպությունների լայն ցանցում։ Ռացիոնալիզատորության և գյուտարարության զարգացման գործում մեծ դեր են խաղացել կոնստրուկտորական և տեխնոլոգիական բյուրոները, որոնք լուրջ օգնություն էին ցույց տվել արտադրության նորարարներին՝ առաջարկությունների նախագծերի մշակման գործում։ 1964 թ. մեր երկրում հաշվում էին ավելի քան 25 հազար հասարակական կոնստրուկտորական բյուրոներ, որոնցում (հաշված նաև 13,5 հազար տեխնիկական ինֆորմացիայի բյուրոները և ավելի քան 6 հազար ստեղծագործական բրիգադները) հասարակական հիմունքներով աշխատում էին 830 հազար ինժեներներ, տեխնիկներ նորարար բանվորներ[32]։ Լենինգրադի 600 ձեռնարկություններում 1965 թ. գործում էին հասարակական կոնստրուկտորական բյուրոներ (ՀԿԲ), որոնցում ընդգրկված էր ավելի քան 8 հազար մարդ[33]։

1964 թվականի տվյալներով ՌՍՖՍՀ-ի ձեռնարկություններում և գիտական հիմնարկներում ստեղծվել էին ավելի քան 21 հազար հասարակական կոնս-

---

29 ՀԿԿ Կենտկոմի կուսակցական օրգանների բաժնի ընթացիկ արխիվ։ «Ս. Մ. Կիրովի անվան գործարանի կուսակազմակերպության աշխատանքի փորձից» զեկուցագիրը, 15 հունվարի 1965 թ.։

30 ՀԿԿ Կենտկոմի ընթացիկ արխիվ, նախագահության արձանագրություն № 63, 8 հունիսի 1965 թ.։

31 «Промышленность Армении», № 5, 1965, стр. 63.

32 «Труд», 25 июля, 1964 г.

33 «Вопросы партийного строительства», Л., 1965, стр. 210.

տրրուկտորական և տեխնոլոգիական բյուրոներ[34]։ Միայն 32 երկրամասերում և մարզերում այդ բյուրոները բանվորներին օգնելու նպատակով մշակել են 21 հազար ռացիոնալիզատորական առաջարկություններ և նորարարություններ[35]։

Սվերդլովսկ քաղաքի ՀԿԲ-ի ստեղծման նախաձեռնությունը Հայաստանում առաջինը արձագանքեց Վ. Ի. Լենինի անվան էլեկտրամեքենաշինական գործարանի կոլեկտիվը։ Սկզբնական շրջանում գործարանի ՀԿԲ-ում ընդգրկված էին 16 ինժեներներ, իսկ հետագայում նրանց թիվը տասնյակ անգամ ավելացավ։

1965 թ. Հայաստանի ձեռնարկություններում արդեն աշխատում էին 60 ՀԿԲ-ներ։ Սվերդլովսկի օրինակով հանրապետությունում կազմակերպվեցին նաև տնտեսական վերլուծության հասարակական բյուրոներ, որոնք գործում էին 70 ձեռնարկություններում։

Մեր կարծիքով, հասարակական մեծ նշանակություն ունի ռացիոնալիզատորական առաջարկությունների ներդրման հասարակական արտադրամասերի կազմակերպումը, որը Միության մեջ առաջին անգամ ծնունդ առավ 1962 թ. Երևանի կոմպրեսորների գործարանում[36]։

Երևանի կոմպրեսորների գործարանի հասարակական արտադրամասը ՍՍՀՄ-ում գյուտարարության փորձարկման համար նյութական բազա ստեղծելու առաջին փորձը հանդիսացավ։ Յոթնամյակի տարիներին այդ գործարանի բանվորների և ծառայողների ստեղծագործական նախաձեռնությունը հանգեցրեց ռացիոնալիզատորական առաջարկությունները հասարակական հիմունքներով ներդնելու անհրաժեշտության։ Այդ կարևոր եզրահանգումը պայմանավորված էր նրանով, որ ներդրման համար գործարանի սահմանափակ հնարավորությունները թուլացնում էին կոլեկտիվի ստեղծագործական նախաձեռնությունը։ Հասարակական արտադրամասի գլխավոր խնդիրն էր արագ ներդնել արտադրության մեջ ռացիոնալիզատորական առաջարկությունները։ Կար նաև ոչ պակաս կարևոր խնդիր՝ բարձրացնել բանվորների ստեղծագործական ակտիվությունը։

Հասարակական արտադրամասը գործարանին բերեց մեծ հաջողություններ։ Ամենից առաջ արդեն 1965 թ. յուրաքանչյուր 8 աշխատողից մեկը ռացիոնալիզատոր էր։ Ռացիոնալիզատորական առաջարկությունների ժամանակին ներդրումը նպաստեց թողարկվող արտադրանքի որակի բարձրացմանը։ Ձեռքի աշխատանքի մեքենայացման շնորհիվ 1965 թ. մեկ բանվորի աշխատանքի արդյունքը հասավ 7200 ռուբլու, որն ավելի էր, քան ՍՍՀՄ-ի բոլոր կոմպրեսորաշինական ձեռնարկություններում։ Եթե 1960 թ. արտադրական անձնակազմի 6708 աշխատողներ արտադրել են 2200 կոմպրեսորային հարմարանք, ապա 1966 թ. 3250 այդպիսի հարմարանք արտադրել էին 626 աշխատողներ։

Ցավոք, Երևանի կոմպրեսորների գործարանի փորձը լայն արձագանք չգտավ մեր երկրի մյուս ձեռնարկություններում։ Իր գոյության 4 տարվա ընթացքում հասարակական արտադրամասի փորձի ուսումնասիրման նպատակով

---

34 Л. И. Ефремов, Ленинские принципы управления хозяйством, М., 1966, стр. 63.

35 Л. И. Петухов, В. В. Ефремов, Ленинские принципы управления хозяйством, изд. «Мысль», 1966, стр. 163.

36 Այս մասին մանրամասն տե՛ս Ա. Ա. Ս ա գ ա դ յ ա ն, Հասարակական հիմունքներով կազմակերպությունների դերը նոր մարդու դաստիարակման գործում, «Էրաբեր հասարակական գիտությունների», № 9, 1965, էջ 19—20։

գործարանում եղել են շատ ձեռնարկությունների ներկայացուցիչներ։ Նման արտադրամասեր ստեղծվեցին Կույբիշևի առանցքակալների և Լուգանսկի[37] լոկոմոտիվների գործարաններում։

Միայն 1966 թ. օգոստոսի 24-ին ռացիոնալիզատորների և գյուտարարների համամիութենական ընկերության կենտրոնական խորհրդի նախագահությունը քննության առնելով Երևանի կոմպրեսորների գործարանի հասարակական արտադրամասի աշխատանքի փորձը, հավանություն տվեց և որոշեց այդ փորձը տարածել ՍՍՀ Միության մյուս ձեռնարկություններում։

Երևանի կոմպրեսորների գործարանի կոլեկտիվը ռացիոնալիզատորության և գյուտարարության ծավալման, առաջարկությունների արտադրության մեջ ներդրման ուղղությամբ մեծ հաջողություններ ձեռք բերեց 1967 թ.։ Դրա ապացույցն են հանդիսանում Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության 50-ամյակի պատվին ստանձնած պարտավորությունները։

Սակայն, չնայած ռացիոնալիզատորության և գյուտարարության զարգացման գործում Հայաստանի առաջավոր ձեռնարկությունների ձեռք բերած որոշակի հաջողություններին, այնուամենայնիվ, այդ շարժման ղեկավարության ուղղությամբ կուսակցական կազմակերպությունների աշխատանքում, ուսումնասիրվող ժամանակաշրջանում, կային լուրջ թերություններ։ Ռացիոնալիզատորության և գյուտարարության ստեղծագործական շարժումը չէր կարելի բավարար համարել։ Միջինը հանրապետությունում 15 աշխատողներից մեկն էր հանդիսանում ռացիոնալիզատոր, այն ժամանակ, երբ առանձին առաջավոր ձեռնարկությունների յուրաքանչյուր 5 աշխատողներից մեկն էր ռացիոնալիզատոր։ Տարեկան ընդունված ռացիոնալիզատորական առաջարկությունների 13 տոկոսը չի ներդրվել արտադրության մեջ։ Օրինակ, 1963 թ. չի ներդրվել 2 հազար ընդունված առաջարկություն, 1964 թ.՝ 1900, Երևանի արմատուրների գործարանում ընդունված 45 առաջարկությունից ներդրվել է 28-ը, էլեկտրաչափիչ ճշգրիտ գործիքների գործարանում համապատասխանաբար՝ 67-ից 38-ը և այլն։

Այսպիսով, ուսումնասիրված ժամանակում, կուսակցական կազմակերպությունների ղեկավարությամբ մասսաների ստեղծագործական ակտիվությունը նպաստեց ռացիոնալիզատորության և գյուտարարության լայն շարժմանը։ Այդ նույն ժամանակաշրջանում մասսաների ստեղծագործական նախաձեռնությունը նպաստեց տեխնիկական առաջադիմությանը կոլեկտիվների մասնակցության հասարակական ձևերի առաջացմանը։ Դրանք մասսաների տեխնիկական ստեղծագործության շարժման մեջ մտցրեցին պլանայնություն, կազմակերպվածություն և կանոնավորություն։ Տեխնիկական ստեղծագործության հասարակական ձևերի կազմակերպումը հանդիսանում է կոմունիստական հասարակական հարաբերությունների առաջացման յուրահատուկ ծիլերը։

---

37 Կոմպրեսորների գործարանի ընթացիկ արխիվ, հասարակական արտադրամասի վերաբերյալ նյութերը։